

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից
1 հուլիսի 1998 թ.

Հոդված 245. ՄԻԱՆՁՆՅԱ և ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բարդ կամ կրկնակի փորձաքննությունները կարող են կատարվել միանձնյա կամ նույն մասնագիտությամբ փորձագետների հանձնաժողովի կողմից: Կողմի պահանջով փորձագետների հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել իր կողմից հրավիրված փորձագետը: Միասնական կարծիքի հանգելու դեպքում փորձագետներն ստորագրում են եզրակացությունը: Տարածայնության դեպքում յուրաքանչյուր փորձագետ կազմում է առանձին եզրակացություն՝ ընդգրկելով բոլոր կամ տարածայնություններ առաջացրած հարցերը:

2. Հանձնաժողովային փորձաքննություն կատարելու մասին որոշումը պարտադիր է փորձագիտական հիմնարկի ղեկավարի համար: Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին՝ առանց հանձնաժողովային փորձաքննության պահանջի, ապա նրա ղեկավարն իրավասու է կազմակերպել հանձնաժողովային փորձաքննության կատարումը:

«3. Դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է միայն հանձնաժողովային կարգով:»:

Հոդված 457. Անվտանգության միջոցները

1. Անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել խափանման միջոցներ: Դատարանի կողմից անմեղսունակության փաստը հաստատվելուց հետո կիրառվող խափանման միջոցը ենթակա է անհապաղ վերացման:

2. Այդ անձանց նկատմամբ անհրաժեշտության դեպքում կիրառվում են հետևյալ անվտանգության միջոցները՝

1) հսկողության համար հիվանդին հանձնելը ազգականներին, հոգաբարձուներին, խնամակալներին՝ իրազեկելով առողջապահության մարմիններին.

2) հոգեբուժական հիվանդանոցում կազմակերպությունում տեղավորելը և բուժելը:

Հոդված 459. Անձին հոգեբուժական հիվանդանոցում կազմակերպությունում տեղավորելը և բուժելը

1. Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և հասարակության համար վտանգ ներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է տեղավորվել հոգեբուժական հաստատությունում կազմակերպությունում:

2. Հոգեբուժական հաստատությունում կազմակերպությունում տեղավորելը և բուժելը թույլատրվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը: